

Մխիթարեանց նախորդ սաներէն: Մեծ անձնաւորութեանց եւ հասարակութեան կողմէ խանդադրին ծախհարեւեցաւ այն նպատակով, ամենաւ կողմէ ծախ թէ համառ գումարներու խտտումներ արեւելեան, որով ընկերութեան ծանր պարտքեր թեթեւցնելու տեղէ տուին: Դիտաւարութիւն կայ մտտօրէն նաեւ համարձեցեալ եւ կազմակերպել, որուն գանձիկը յաջորդութիւն (տեւի նիւթական) արդէն ապահովուած է... Ընկերութիւնը կազմուած է ութնմէ, կը մնայ գործի ձեւաւորելու եւ փոքրիկներու աղէտը սփռիլ, որուն վրայ անտարակոյր մեր լիցիւթակիցը պիտի հաճի ուրախուիլ եւ յաջողութիւն հաղորդել:

9. Լեզուական շրջան: Պր. Ա. Արտաշեսեանց «Մարտի» մէջ (թիւ 2-3) «Էզգական զրոյցներ» անուանող գրած է յօդուած մը, յորում օրինակներով կը հաստատէ թէ քիչպէս միեւնոյն բառը, բայց, եւայլն. այլեւայլ գործնեբոս գրչէն տակ, այլեւայլ ձեւեր կ'առնու (մանաւանդ կատարաւոր ու հրամայականն օրինակ: Բերելու, Բերել — Բերելն — Գնել, Գրել — Գրելն եւայլն): Բայց միայն գործնեբոս գրչէն տակ չ'երեւար այս ձեւը, գաւառական ձեւեր են, ըստ որում Մշակչին միշտ Բերելն կ'ըսէ, իսկ ուրիշ գաւառական մը Բերել: Բաղձալի եր անշուշտ որ միօրինակեալ գրչութիւն մը արեւելք այս ձեւերուն, բայց որ ձեւին նախապատուութիւն պիտի արտի, — ահա ինչդիր մը՝ որ ապաստեւութեանց մասնացոյց ընելով չի լուծուիր: Արեւմտեան հայը՝ գրաբարի ձեւը կը գործածէ, Բերել եզ. առաջին գէմքի մէջ, իսկ երրորդ գէմքի մէջ կը խտտորի եւ կ'ըսէ՝ ոչ Բեր կամ Բերել, այլ Բերաւ: Գրել, Գրելն, — Գրաւ, գրաւ, գրաւ — Գրաւաւ (եւ ոչ գրաւաւ): Զարտուող բայ անուամբ կը պահուի արեւմտեան հայերէնի մէջ այս բայերուն դարտուող խոնարհումը: Բայց կան ռեալ գործածութիւններ ալ. օրինակի աղաղաւ. աշխարհաբարի մէջ ի՞ եւ ոչ վերջաւորութեամբ բայերէն շատերը կանոնաւորապէս ջոյ կ'ըլլան կատարելի մէջ, բայց Պոլսոյ լրագիրներն ունին շատ անգամ եջի (անշուշտ միտ չ'ընելով թէ աներեւոյթն ի՞ չէ, այլ ի՞. այսպէս ընդունիմ = ընդունել ջոյ, ջոյ, ջոյ, ըստ որում բայը ընդունիմ է եւ ոչ ընդունիմ, իսկ արեւելեան հայերէնի մէջ ընդունիմ (անիմ) է եւ ոչ ընդունիմ. ուրեմն ռեալ համարելու եղբ ընդունելն չ'ըր, եջ ձեւը, խոնարհ, ինչո՞ւ — կ'ըսոյ եւ ոչ կ'ընէ, որ ուղարկական է եղած համար Պոլսոյ լրագրաց, խնդիրն է թէ որ ձևականութեամբ պիտի հաստատուի վերջնական ձեւը. ամենամեծ ճիշտութիւնն է այս պարագայից մէջ՝ ոչ ուղարկական կամ երեւակայեալ ձեւաւորանքներ, եւ ոչ կանոններ, այլ — ժամանակը եւ գործածութիւնը:

ՕՍԿԱՆԱՐԱՐ



ՄԱՅԻՍԻՆ ՏԵՄԱՐԻՆԸ

Հիմնաւ, 27. Մայիս, 1897:

Տաճկական — Յունական պատերազմ: Մինչ Կրետէի առջև համախմբուած վեց մեծ տէրութեանց նաւատորմորդներու երաժիշտ զինուորները միշտ իրենց միաբանութիւնը ցոյց տալու համար իւրաքանչիւրն իւր ազգային երգը կը նուագէր — անշուշտ վեցն ալ միաժամանակ, որպէս զի իրապէս ցոյց տրուէր խառնածայն աններդաշնակութիւնը այս խաղացուած ծաղրախաղին մէջ — ցամաքէն փողի ծայն մը պատերազմի սկսիլը կը զուժէր: Յունական ազատակամներու յարձակմանց առջև առնելու համար Օսմանեան պետութիւնը հարկ տեսաւ պատերազմ՝ հրատարակել: Ամսոյս 17ին Էդհէմ՝ Փաշա՝ անագին քաղաքի մամը յարձակողականի սկսաւ: Թէ Յոյները պիտի յաղթուին՝ մարդկային հաշուով հաւանական կ'երեւայ, վասն զի 9 օր քաջութեամբ սահմանները (եւ մանաւանդ Մելունայի կիրճը) պաշտպանելն ետըր, 26ին՝ զինուորական կարճատեւ խորթոյ մը ետըր, Լարիսան թող տուած՝ Փարսալուս ամրացան: Հոս որոշիչ ծակատ մը կը պատրաստուի: Թէ տաճիկ զինուորներն իրենց պատերազմելու եռանդուն, եւ թէ յոյն մարտիկներն իրենց յուսահատական պաշտպանութեամբն արդէն աշխարհս զարմացուցին: Բայց՝ որչափ կ'երեւայ, այս պատերազմի շատ դիրաւ պիտի չվերջանայ. վասն զի ի Թեսալոնա եղած յունական կորուստը կը հակակշռի Տիպրոսի մէջ եղած զինու յաջողութեամբը: Իսկ յունական նաւատորմին աւեր ու ապականութիւն կը գործէ, ծովագերեալ քաղաքները զնդակոծելով. Պատամնա, Կատրինա, Պրէվէզա, Նիկոպոլիս, Բարա-Քուտուն եւայլն, արդէն զնդակոծուած են. բայց եթէ որոշիչ ծակատ մը մէջ Էդհէմ՝ Փաշա յաղթանակը կանգնէ յունական թանակին վրայ, այն ատեն որմքակոծուած քաղաքներու տուգանքն ալ պիտի ծանրանայ Յունաց փողքի եւ աղքատ տէրութեան վրայ: Այս երկու

անհաւասար տէրութեանց երկակողմանի կրած վնասները խափանելու համար կը ցանկանք մեծ հռչակուած տէրութեանց կողմանէ „Non plus ultra!“ առածը լսել: Գրնայ այս կրակը հրդեհեւ աւելորդ Բալկանեան թերակղզին եւ նշանները շատ հեռու չեն:

Ռուսիա եւ Աւստրիա: Այսօր Պետերբուրգ կը հասնի Աւստրիայի Փրանց Եօզէֆ Կայսրը: Անգղիա ինչպէս կ'երևայ, շատ հաճ աշօք չի դիտեր այս այցելութիւնը, մանաւանդ եթէ մտածուի՝ թէ Գերմանիայի երիտասարդ Կայսրը փութաց եկաւ ի Վիեննա, անշուշտ իր «թանկագին», խորհուրդները տալու՝ ուղարկող ծերունի Կայսրը: «Նոր դաշնակցութիւն», «Երից կայսերաց նիգակակցութիւն», եւ այլն, ծայրերն սկսան լսուիլ, քայք քաղաքական այս ալեկոծեալ ժամանակի մէջ շատ տնգամ՝ լրագիրներն նրախանգ կ'առնուն ընթերցողաց ուշադրութիւնն ուրիշ կէտերու վրայ փոխադրելու, որպէս զի ըսն խնդրը մոռցուի: Բուն խնդիրը կը համարենք Բալկանեան թերակղզոյն վիճակը, որ ժամանակէ մ'ի վեր աստրիական սրտերը քարախել կու տայ, վախճալով թէ մի գուցէ Սեւանիկն վէճի նիւթ ըլլայ: «Երբեք նոր նիւզակակցութիւնը», թերեւս ոմանց քաղձալի է. քայք արդեօք գաղղիական եւ անգղիական տէրութեանց միոճեցումը՝ Եւրոպայի զինեալ խաղաղութեան վերջ մի տալու սկիզբ պիտի չըլլայ: Քաղաքական անորոշութեան առջեւ՝ լաւագոյն դիրքն է «սպասողական դիրք», մ'առնուլ, ոչ լրագրական խմբագրականներէն խաբուիլ, ոչ պաշտօնական հեռագիրներէն: Վերջիններուն ջան ու ծիգն է ինչպէս „Neue Freie Presse“ շատ յայտնի կը ցուցնէ՝ թողաւանդաւ խաղերուն դիրքութիւններ մատուցանել եւ շահանդրութեան զոհել պարզամիտներու վարանումներն ու — քսակները:

Դժ. Լուէգէր վերջապէս Վիեննայի քաղաքապետ եղաւ եւ Կայսրն այս անգամ՝ հաստատեց ընտրութիւնը: Նոր ջըջան մի կը բացուի անձնի անհաւանանքով, Վիեննայի համար, քայք պիտի ազդէ՝ ապահով ենք, բոլոր քաղաքականացեալ երկիրներու վրայ, եւ ազգերն

պիտի սկսին ազատ շունչ առնուլ հրէական լուծը թօթափելով, լուծ մը որ մանաւանդ լրագրաց միջոցով օրըստօրէ կը ծանրասոյս ամենուն վրայ:

Անգղիա եւ Գաղղիա: Վերը յիշեցինք անցողակի այս երկու տէրութեանց իրարու մերձենալու փորձերը: Լորտ Սուլզբըրի Պր. Հանտոյի հետ տեսակցութիւն մ'ունեցաւ. թերեւս հասարակ ժամանակներ այնչափ մեծ նշանակութիւն չ'ունենար այս տեսակցութիւնը, քայք հիմա՞յ քանի որ Տրանսիլուպի եւ Դէլազա ծովածոցին խնդիրները կան եւ գերմանական տէրութեան հետ յարաբերութիւնները շատ քարեկամական չեն, կրնայ այս տեսակցութեան նպատակը գուշակուիլ:



ԲԱՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՄԵՆԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Ս. Գրոց յարգն ու արժեքն հին Հայոց քով. 129: — Փաստսոս Բիւզանդացի եւ իւր պատմութեան խորագիրը. 137:

ՊԱՏՄԱԿԱՆ — Համաոստ պատմութիւն Հայոց ըստ Պրոք. 4. Գէլցէր. 145:

ԼԵՃՈՒՍԱՐԱՄԱԿԱՆ — Արդի լեզուագիտութիւնը. 153:

ԱՆԵՒԵՆԱԿԱՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ — 1. Պատմական տեսութիւն Հայոց վրայ: — 2. Մանկական գրադարան: — 3. Հայոց վրայ քանի մը յօդուածներ: — 4. Հայ Պաւլիկեանք մասին: — 5. Պատկերացոյց թաղային վարձարանաց Կ. Պոլսոյ. 155:

ԱՋԳԱՅԻՆ ԹԵՐԹԻՒՆ ԺԱՆՆԵՓՈՒՆՆԸ — 1. Բարձր. իշխան Մկրտչ յան: — 2. Ժ Ասպետ Ա. Հռնդի կտակը: — 3. «Թուրք ու գրպարտութիւններ»: — 4. Յովան կաթողիկոս Դրասխանակերտցոյ (պատմագիր) Նորագիտ մը ծանո: — 5. Տառապնեղ օգնելու Նոր ընկերութիւն մը: — 6. Ռուս-հայկական ընկերութիւն: — 7. «Ժողովրդային» լեզու: — 8. Որք հողացը խնամել: — 9. Լեզուական գրոյքներ. 156:

ԳԵՂԱԳԱԿԱՆ ՑԵՍՈՒԹԻՒՆ 159:



ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱՆԱՅՈՒՆ ԽՄԱՐԱԳԻՐ

Հ. ՌԱՓԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ, ԴԵԻԹԵՐԲԵՆ ԶԳՐԱՐԱՆ